Աշունը YIC-ի հետ

2013 # 6

«CAUCADOC -ը և Ոսկե Ծիրանն անիվների վրա»

Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ի կողմից կազմակերպված «CAUCADOC-ը և Ոսկե Ծիրանն անիվների վրա» վավերագրական ֆիլմերի փառատոն է, որն իրականացվում է «Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ի ֆինանսավորմամբ: Փառատոնի ընթացքում ցուցադրվեցին հայ և եվրոպացի ռեժիսորների աշխատանքներ: Միջոցառումը տևեց 3 օր ներառելով շուրջ 180 հանդիսականներ: Փառատոնի բացումը տեղի ունեցավ նոյեմբերի 8-ին Գյումրու թիվ 7 դպրոցի դահլիճում: Բացման խոսքը տրվեց «Մարդը կարիքի մեջ» ՀԿ ներկայացուցիչ Վարդուհի Դադունցին, ով ողջունեց հյուրերին, ներկայացրեց փառատոնի նպատակները, ինչպես նաև Հարավային Կովկասում իրականացվող ամբողջ փառատոն-ծրագիրը: Նա նշեց նման փառատոնների և ցուցադրությունից հետո քննարկումների իրականացման կարևորությունը: Բարձրացված հարցերի շուրջ քննարկումներ կազմակերպելու համար հրավիրվել էին հատուկ մասնագետներ: Հրավիրված մասնագետների ցուցակում էին՝

- Գուրգեն Բաղդասարյան – Ծրագրերի համակարգող «Ծերերի ցերեկային խնամքի կենտրոն », «Հայկական Կարիտաս» ԲՀԿ:
- Կրիստինա Մագրելաշվիլի – Հանրության հետ կապերի և տեղեկատվության բաժին, Քութաիսի, Վրաստան:
- Իվա Բարտոսովա - «One World» Պրահա, Չեխիա:
- Վարդուհի Դադունց – «Մարդը կարիքի մեջ» Երևան, Հայաստան:
- Արմեն Նախշքարյան – Գյումրու քաղաքապետարանի կրթության բաժնի պետ, Պատմական գիտությունների թեկնածու:
- Մկրտիչ Բաբայան – Միգրացիայի ոլորտի փորձագետ, ծրագրերի պատասխանատու «Հայկական Կարիտաս» ԲՀԿ
- Արմեն Վարդանյան - Արվեստագետ, կինոռեժիսոր

Փառատոնին ներկայացված ֆիլմերի թեմաների շրջանը բավական լայն էր և առնչվում էր հայկական իրականությանը վերաբերող ցավալի խնդիրների՝ միգրացիա, սեռի պատճառով երեխայից ազատվել, ՀՀ երկու հարևանների հետ պատմական խնդիրներ: Հանդիսատեսի համար հատկապես ոգևորիչ էր ռեժիսորների ներկայությունը: Յուրաքանչյուր ֆիլմից հետո տեղի ունեցող քննարկումները շատ կարևոր էին և յուրահատուկ գույն հաղորդեցին ֆիլմերին և նրանցում արտացոլված թեմաներին: Տարբեր սերունդների՝ երիտասարդների, միջին տարիքի և տարեցների ներկայությունը, ավելի թեժ և հետաքրքիր էր դարձնում քննարկումները: Մարդիկ սկսում էին մտածել այն հարցերի շուրջ, որոնց նրանք ուղղակիորեն կամ անուղղակիորեն հանդիպում են և փորձում էին լուծում գտնել այդ հարցերին:Քննարկումների ուսումնական նախադրյալները շատ կարևոր էին, միշտ էլ բավականին բան կա սովորելու ոլորտի մասնագետներից, ովքեր պատրաստ էին կիսել իրենց պրակտիկ և տեսական գիտելիքները: «Ոսկե Ծիրանի» ֆիլմերը արժեքավոր էին փառատոնի համար և հանդիսատեսը խորապես գնահատեց մրցույթային ֆիլմերը դիտելու և կինոռեժիսորների հետ դեմ առ դեմ դրանք քննարկելու հնարավորությունը:

Էսմարիդա Ղողոսյան

Մշակույթների խաչմերուկներ

Սեպտեմբերի 20-28, 2013, Վրաստան

«Մշակույթների խաչմերուկներ» երիտասարդական փոխանակման ծրագրի շրջանակներում հատվեցին տարբեր մշակույթներ, որն էլ արտացոլվեց երիտասարդ արվեստագետների ստեղծագործություններում: Ծրագրի բուն գաղափարն էր փոխանակվել միմյանց հետ ոչ միայն արվեստի ոլորտում ձեռք բերած գիտելիքներով, այլ նաև մշակույթներով: Ամեն մի թիմ իր երկրի կրողն էր, իր երկրի արտացոլանքը: Հայկական թիմը ոչ միայն աչքի ընկավ իր համախմբվածությամբ, այլ նաև ամբողջ ցուցահանդեսի ընթացքում կազմակերպչական գործունեություն ծավալելով: Ընդհանուր առմամբ բարձր մակարդակով էր կազմակերպված հյուրընկալությունը և ստեղծված էին բոլոր պայմանները ստեղծագործելու համար: Հյուրանոցի պատուհանից բացվում էր հիանալի տեսարան՝ իր ամբողջ գեղեցկությամբ սփռված էր Սև ծովը, որն էլ հանդիսանում էր ոգեշնչման աղբյուր: Մեր աշխատանքները ամփոփվեցին Քոբուլեթիի բաց երկնքի տակ, հանդիսավոր կերպով ցուցադրվեց Բաթումիում, և ի վերջո ցուցահանդեսը հանգրվանեց Թբիլիսիի գեղարվեստի ակադեմիայի ցուցասրահում:

Տարոն Մանուկյան





STEP OUT OF YOUR MIND, ANIMATE YOUR LIFE

23 Նոյեմբեր – 1 Դեկտեմբեր, 2013, Ռումինիա

Ողջու՛յն աշխարհ: Բուխարեստը Բուդապեշտ չէ: Գուցե կրկնվում եմ, կամ ծեծված խոսքեր են, բայց իսկապես ես հասկացել եմ այս խոսքերի իրական արժեքը: Ահա այսպես է սկսվում իմ առաջին միջազգային սեմինարը Ռումինիայի մայրաքաղաք Բուխարեստում: Հարցն այն է, որ ավիատոմսեր վերցնելու համար հազար անգամ խնդրել էի ավիատոմսեր վերցնելուց լինել մի փոքր ուշադիր եւ հնարավորինս էժան ավիոտոմս տրամադրել ինձ՝ դեպի Բուխարեստ: Ստացվել էր այնպես, որ ավիատոմս էին վերցրել Բուդապեշտի համար՝ կարծելով, որ ճիշտ ուղղություն են ընտրել ինձ համար: Բայց ինչպես ասում են. «Բուխարեստը Բուդապեշտ չէ»: Պարզվում է, ոչ բոլորն են օգտվում Wikipedia-ից, ինչ արած: Շտկել է պետք իրավիճակը: Իսկ երբ արդեն այս ամենի մասին ներկայացրեցի Բուխարեստում, ընկերներս նշեցին, որ ոչ առաջինն եմ ոչ էլ վերջինը: Փաստորեն ամբողջ աշխարհում Բուխարեստ-Բուդապեշտ խաչմերուկի խնդիր կա, նույնիսկ նմանատիպ կայք գոյություն ունի (http://www.budapestnotbucharest.net/):

Նոր երկիր, նոր կանոններ, նոր ապրելակերպ, հետևաբար ես սկսում եմ նորովի փոխվել՝ մինչև սեմինարի սկսվելը: Մի փոքր անսովոր էր, բայց սկսում եմ ազգային մենթալիտետից դուրս մտածել, այլ տեսանկյունից, այլ մտքեր ու գաղափարներ են ինձ մոտ ծնվում: Սկզբում անսովոր էր նման կերպ շարունակել, հետո հասկացա, որ սա էլ է պետք: Դժվար էր համակերպվել մի շարք կանոնների, որոնք նախկինում ոչ լսել էի կամ էլ ուշադրություն դարձրել: Սա կարելի է, սա չի կարելի, սա պարտադիր է: Տաքսիների հետ գործ չունեք, ուշադիր կլինեք դրամապանակին...Հայաստանի՞ց եք...Հա՛, կոնյա՞կ, ծիրա՞ն: Իջնում ես օդանավակայանից ու միանգամից սկսում փողոցներով շարժվել, գնալ տեսնել բոլոր այն տեսարժան վայրերը, որոնք համացանցով տեսել ես, կամ ընկերները եղել են ու խորհուրդ են տվել գնալ տեսնել: Բուխարեստում ծանոթացա Քրիստիանի հետ, բարի մարդ էր, հյուրատան տերն էր: Հայերի հետ նախկինում շփվել էր, ընկերներից մեկը խորհուրդ տվեց մնալ իր մոտ: Բավականին օգնեց, քարտեզներ, խորհուրդներ, եւ իհարկե՝ հաճելի զրույց: Բուշտենի, Գուռա Դիհամ, 7 օր: Սեմինարը կարծես թե նույնն է, ինչ անում ես կամ անում են Հայաստանում, բայց մարդիկ տարբեր են, հետևաբար զարգացնելու հանարավորություն կա, ոչինչ միօրինակ չի անցնում: Ազգային սովորույթներ՝ ծանոթ ու անծանոթ, ընդունելի և աչքին ոչ սովոր: Մտերիմ միջավայր, ես կասեի առանձնահատուկ ջերմություն բոլոր մասնակիցների կողմից: Գաղափարների փոխանակման և դրանց իրականացման աշխատանքներ հենց սեմինարի ավարտի ու վերադարձի հաջորդ օրվանից: Ես զգացված եմ: Հատուկ անուններ չէի ուզում շեշտադրել Ռումինիայի իմ սիրո նովելի մեջ, բայց ես սիրեցի բոլորին՝ այն մարդկանց, ովքեր ինձ օգնեցին հասնել Ռումինիա, YIC կենտրոնին և իմ շատ սիրելի Վալյա Մարտիրոսյանին, Ռումինիայում ծանոթացած իմ բոլոր ընկերներին եւ տեղի կազմակերպիչներին, ինչպես նաև սեմինարին ինձ հետ Հայաստանից մեկնած երկու աղջիկներին՝ Անժելային և Սյուզանին: Այս երկուսին ուզում եմ ասել, որ ինձ համար իրենց հետ ճանապարհորդելը նույնիսկ չափից դուրս շատ լավ էր: YIC կենտրոնի կողմից համակարգվող մյուս միջազգային ծրագրերին անպայման դիմելու եմ, քանզի այն հնարավորությունների մեծ պաշար ու զարգանալու տարբեր ուղղություններ է ստեղծում քեզ համար, իսկ ես բարոյականապես պարտավորվածություն ունեմ մեկի ստեղծածը զարգացնել և փոխանցել սերունդներին: Շնորհակալություն Ռումինիա, որ կյանքիս մի էջը հարուստ գույներով գրվեց:

Արսեն Վարդանյան

Կոնֆլիկտն ընդդեմ բանակցության

14-21 Սեպտեմբեր, 2013, Փամբակ, Հայաստան

Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն Եվրամիության «Երիտասարդությունը շարժման մեջ» ծրագրի շրջանակներում Սեպտեմբերի 14-ից 21-ը /2013թ/ կազմակերպեց «Կոնֆիլկտն ընդդեմ բանակցության» խորագրով միջազգային դասընթաց, որը տեղի ունեցավ Լոռու մարզի Փամբակ գյուղում: ԵՆԿ ՀԿ հյուրընկալել էր 28 երիտասարդների՝ Հայաստանից, Չեխիայից, Թուրքիայից, Վրաստանից, Գերմանիայից, Մոլդովայից և Ուկրաինայից:

Կոնֆլիկտների հաղթահարում և բանակցությունների հմտություններ թեմայով յոթօրյա միջազգային դասընթացի նպատակն էր տարածել խաղաղության մշակույթը երիտասարդների միջև:

Կոնֆլիկտների կառավարման և բանակցություններ վարելու հմտությունների վերաբերյալ «Կոնֆլիկտն ընդդեմ բանակցության» միջազգային դասընթացը ֆինանսավորվել է Եվրախորհրդի «Երիտասարդությունը շարժման մեջ» ծրագրի շրջանակներում: Դասընթացի նպատակն երիտասարդների մեջ խաղաղության մշակույթի փոխանակումն էր՝ նրանց հնարավորություն տալով փոխանակել խաղաղության կառուցման և միջսահմանային փորձը:

Ծրագրի խնդիրներն էին՝

- Զարգացնել բանակցություններ վարելու հմտություններ և ընդունակություններ՝ կոնֆլիկտներով զբաղվելու համար,
- Կոտրել կարծրատիպերը՝ տարբեր երկրների և մշակույթների միջև հաղորդակցման ուղիներ ստեղծելու միջոցով,
- Խթանել համագործակցությունը և գործընկերությունը Արևելքի և Արևմուտքի երիտասարդական կազմակերպությունների միջև:

Արթուր Նաջարյան

Կամավորություն + Գործողություն = Փոփոխություն

«Կամավորություն + Գործողություն = Փոփոխություն»-ը համահայկական կամավորական քարոզարշավ էր, որն իրականացվեց Քաունթերփարթ Հայաստանի և ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության աջակցությամբ: Ծրագրի նպատակն էր բարձրացնել կամավորական աշխատանքի արժեքը հայ հասարակությունում և կամավորության ազդեցության դերն անհատի և համայնքի զարգացման գործում:

Յոթամսյա ծրագիրը հագեցած էր հանրային միջոցառումներով, որոնք հնարավորություն տվեցին հասնել ծրագրի նպատակներին: Բոլոր միջոցառումները հանրային էին, և մենք փորձում էինք ներգրավել Հայաստանի բոլոր մարզերը, ներառյալ՝ Երևանը: Ծրագիրը նախատեսված էր այնպես, որ կարողացանք ներգրավել տարբեր սոցիալական խմբերի՝ օգնելով բարձրացնել կամավորության ոգին և մշակույթն երիտասարդների, երեխաների, չափահասների և տարեցների շրջանակներում, ինչպես նաև կրթության և բիզնեսի սեկտորներում, հատկապես Հայաստանի գյուղական տարածքներում: Արշավի ընթացքում իրականացվել են հետևյալ միջոցառումները՝

- Մամլո ասուլիս
- Կամավորության հնարավորությունների ներկայացում
- «Տնական ուտելիքի» օր
- «Ես կամավոր եմ» ֆլեշմոբ
- Ներկարարության օր
- Մաքրության և ծառատունկի օր
- Լուսանկարչության մրցույթ-ցուցահանդես
- Փակման արարողություն

Նոյեմբերի 2-ին Երևանում տեղի ունեցավ եզրափակիչ միջոցառումը: Միջոցառման մաս էր կազմում նաև համաժողովը՝ հետևյալ հարցերի շուրջ.

- Հայաստանում կամավորական աշխատանք կատարելու խոչընդոտները,
- Կամավորության արժեքն ու մշակույթը,
- Կամավորության մասին օրենքի մշակում,
- Ինչպես օգտագործել կամավորական փորձը՝ բարձրացնելու աշխատունակության հնարավորությունները,
- Կամավորական աշխատանքի ճանաչումը (Եվրոպական Երիտասարդական Հիմնադրամի ծրագրերի շրջանակներում)

Համաժողովին հաջորդեց լուսանկարչության մրցույթին արդյունքերիամփոփումը և հաղթող լուսանկարիչներին մրցանակների տրամադրումը:

Միջոցառումն եզրափակվեց Գյումրեցի երիտասարդ երգչուհիներ Արմինե Քոչարյանի և Նարե Գևորգյանի համերգով:

Նելլի Մինասյան

ԵԿԾ ուղարկում

Ինձ ուղարկող կազմակերպության՝ «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ի շնորհիվ, ես հնարավորություն ստացա մասնակցել ԵԿԾ ծրագրին մաս դառնալ և կատարել կամավորական ծառայություն Թուրքիայի Ստամբուլ քաղաքում: Այս ծրագրի շրջանակներում ես կամավորական աշխատանքներ կատարեցի Հրանտ Դինք հիմնադրամում և TOG (Community Volunteers Foundation)-ում: Սա յուրահատուկ հնարավորություն էր աշխատելու մարդու իրավունքներին, ազգերի միջև երկխոսությանը, քաղաքացիական հասարակությանը և այլնի վերաբերող ծրագրերին: Ծրագրերի իրականացմանը օգնելու ընթացքում ես ձեռք բերեցի փորձ, որը կդառնա հիմք ապագայում իմ ծրագրերի իրականացման համար: Իմ հեղինակած հոդվածը տպագրվեց «ԱԿՈՍ» թերթում: Ես նաև հնարավորություն ունեցա աշխատել Ստամբուլում գտնվող հայկական այլ կազմակերպությունների հետ՝ պատրաստել ռադիո հաղորդում Ստամբուլում հայերի կյանքի մասին «Նոր Ռադիոյում»: Այս ծրագրի շնորհիվ ես շատ բան սովորեցի Ստամբուլի հայկական համայնքի մասին, աշխատեցի «Նոր Զարթոնք» կազմակերպության հետ, ձեռք բերեցի նոր ծանոթություններ և ընկերներ: Այս կազմակերպությունների մի մասը լինելով՝ մասնակցեցի շատ միջոցառումների, համաժողովների և քննարկումների:

TOG-ի և Հրանտ Դինք հիմնադրամի իրականացրած տարբեր ծրագրերի շնորհիվ՝ ես հնարավորություն ունեցա կարճ ժամանակով այցելել այլ քաղաքներ, տեսնել տեղի կենցաղը և ՀԿ-ների աշխատանքը: Ես շփվեցի տարբեր աշխարհայացքներով, ազգերի և փորձերի տեր մարդկանց հետ, ուսումնասիրեցի նրանց մշակույթը, պատմությունը, ավանդույթները և այլն: Լինելով «Հայկական Գիրք» TOG-ի «Կենդանի գրադարանում» ես հնարավորություն ունեցա իմ «ընթերցողների» հետ քննարկել Հայ-Թուրքական հարաբերություններում առկա խոչընդոտները: Դա ինձ օգնեց առավել լավ հասկանալ երիտասարդության վերաբերմունքը այս խնդրին: Շնորհիվ այս ԵԿԾ ծրագրի՝ ես ուսուցանում եմ թուրքերեն, ինչը թույլ կտա բարելավել ունեցած գիտելիքներս և սովորել ինչ-որ մի նոր բան:

Որպես եզրակացություն կարող եմ ասել, որ այս ԵԿԾ ծրագրի մի մասը լինելը, TOG-ի և Հրանտ Դինք հիմնադրամի հետ աշխատելը, Ստամբուլում ապրելը օգնում են իմ զարգացմանը և տալիս բավարար փորձ կյանքի տեմպին համահունչ լինելու համար:

Վարդուհի Բալյան

ԵԿԾ հյուրընկալում

2013թ.-ի աշունը շատ արդյունավետ էր ԵՆԿ-ի համար: Հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին մենք դիմավորեցինք մեր նոր կամավորներին՝ Ալեքսին և Ջուդիտին Գերմանիայից և Կրիստինային՝ Լեհաստանից: Կամավորներին ներկայացվեցին ամենակարևոր բաները կապված կազմակերպության, իրենց աշխատանքի, առաջադրանքների, տեղի իրականության, ավանդույթների, Գյումրվա և Հայաստանի հետ:
Ալեքսը, Ջուդիտը և Կրիստինան սկսեցին իրենց նախաձեռնությունները ինչպիսիք են՝ Գերմանական մշակութային ակումբը, ուրբաթօրյա սրճարանը և քննարկումների ակումբը, նրանք նաև աշխատանքներ են կատարում ԳՊՄԻ-ում և Գերմանական դպրոցում:
Կամավորները ԵՆԿ թիմի մի մասը կլինեն մինչև 2014թ.-ի սեպտեմբերը: Բաց մի թողեք նրանց հանդիպելու և նրանց կողմից կազմակերպված միջոցառումներից օգտվելու հնարավորությունը:

Նելլի Մինասյան

You(th)r life

Հոկտեմբեր 2-10, 2013, Պորտուգալիա

21-րդ դարը տեղեկատվության և տեխնոլոգիաների դար է: Շատ մարդիկ, ներառյալ ինձ կապված են սոցիալական և ինտերնետային ցանցերի միջոցով, և բազմաթիվ ուսանողներ, աշխատողներ, գործատուներ, քաղաքական գործիչներ օգտագործում են իրենց էլեկտրոնային հասցեները և փոստարկղները, ես նույնպես օգտվում և ամենօր ստուգում եմ իմ հասցեն:
Հենց այդպիսի օրերից մեկն էր, երբ ես որոշեցի ստուգել իմ փոստարկղը, և մուտք գործելով՝ տեսա ԵՆԿ ՀԿ մարդկային ռեսուրսների պատասխանատու Վալյա Մարտիրոսյանի ուղարկած նամակը:

Դասընթացը հյուրընկալել էր H2O ՀԿ-ն, որը իր գործունեությունը ծավալում է Առոկելլաշ փոքր գյուղում:
Դասընթացը նախատեսված էր երիտասարդական ոլորտում աշխատողների և երիտասարդ առաջնորդների համար և նպատակ ուներ սովորեցնել նրանց տարբեր գործիքների կիրառումը ուղղված գյուղական շրջանների արժեքների պահպանմանը և այդ շրջանների երիտասարդների փոխանակման ծրագրերի, իրենց ունակությունների և կարողությունների զարգացմանը աջակցելուն:

Ավելի քան 29 մասնակից Եվրամիության, արևելյան Եվրոպայի և Կովկասի երկրներից, տարբեր մշակութային միջավայրներից և տարբեր գիտելիքներով, հավաքվել էին Պորտուգալիայում դասընթացին մասնակցելու, նոր մշակույթներ ուսումնասիրելու, բարձրացնել տեղական մշակութային ժառանգության պահպանման համար անհրաժեշտ գիտելիքները ինչպես նաև գյուղաբնակ երիտասարդներին ակտիվ երիտասարդական կյանքին և աշխատանքներին ներգրավելու միջոցները:
Դասընթացի ընթացքում մենք սովորեցինք՝ ինչպես կազմակերպել այնպիսի ծրագրեր, ինչպիսիք են Եվրոպական Կամավորական Ծառայությունը, Երիտասարդական փոխանակումները հիմնված մշակութային և տեղական արժեքների պահպանման վրա: Դասընթացավարները ծանոթացրեցին մեզ երիտասարդների հետ աշխատելու գործիքներին և մեթոդներին, ցույց տվեցին թե ինչպես կարելի է օգտագործել Եվրոպական գործիքները և արժեքները հասարակության վրա դրական ազդեցություն ունենալու համար, ինչպես գտնել գործընկերներ և ինչպես նախապատրաստել և կառավարել ծրագրերը: Դասընթացի կարևոր և կառուցողական մասն էին կազմում ցուցահանդեսը, տեղացիների հետ քննարկումները՝ մասնավորապես Առոկելլաշի երիտասարդության հետ, որը նպատակ ուներ տարածել Եվրոպական արժեքները և հնարավորությունները երիտասարդության շրջանում՝ նրանց քաջալերելով լինել ավելի նախաձեռնողական և մոտիվացված փոփոխություններ իրականացնելու, առավել լավ կյանք և համայնք ունենալու համար:
Բացի վերը նշված ասպեկտներից, դասընթացի ընթացքում մենք հնարավորություն ունեցանք ներկայացնելու մեր երկրների մշակույթները և ավանդույթները, ինչպես նաև մասնակցեցինք կազմակերպությունների ներկայացմանը, որը օգնեց հաճելի միջավայր ստեղծել մասնակիցների շրջանում:
Դասընթացը շատ արդյունավետ էր իր բոլոր բաժիններով՝ **«Առոկելլաշը 13 երկրների աչքերով»** ցուցահանդեսի նախապատրաստությամբ, մեր երկրների ներկայացումով, Ռիո Մայոր կոչվող փոքր քաղաքի և այդ քաղաքի գրադարան, ինչպես նաև **«Երիտասարդությունը շարժման մեջ»** ծրագրի Պորտուգալիայի ազգային գործակալություն այցելությամբ, որտեղ մեզ ներկայացվեց Եվրոպական նոր **«Էրասմուս+»** ծրագիրը, դրա նպատակները, նպատակային խմբերը, գործողությունները և ժամկետները, ցուցադրելով ոչ ֆորմալ կրթության կարևորությունը Եվրոպայում և Եվրոպայից դուրս:
Դասընթացի շատ կարևորը մասը, որը կուզենայի նշել տարբեր մշակույթների ներկայացուցիչներից կազմված աշխատանքային խմբերն էին, որը օգտակար էր մշակութային արժեքների պահպանման և գյուղական միջավայրի զարգացման շուրջ ապագա համագործակցության նոր մտքերի ստեղծման համար:
Մենք շատ շնորհակալ ենք ուղարկող և հյուրընկալող կազմակերպություններին և դասընթացավարներին, մեր մեկ շաբաթը անմոռանալի, գիտելիքներով, ինֆորմացիայով և փորձով լի դարձնելու համար:

Ռեբեկկա Հովհաննիսյան

Կոնտակտային տվյալներ

Հասցե: Ջիվանի , Գյումրի 3105, Հայաստան
Հեռ.: (+374) 312 6 94 97
Էլ-հասցե: newsletter@yic.am
Վեբ-կայք: www.yic.am

Թարգմանություն՝ Գ. Գրիգորյան **Խմբագիր՝** Ռ. Բեգոյան **Գլխ. խմբագիր՝** Ա. Նաջարյան
Ռ. Բեգոյան